գամայն, գրեցին առ Պատրիարքն և առ գլխաւորս աղդին 'ի Կոստանդինուպոլիս ամենայն ինչ որ միանդամ գործեցաւ յԵրուսաղէմ, և խնդրեցին դարմանել զիրան. և նոքա գրեալ ծանուցին 'ի Դուռն, և խնդրեցին վերստին հրովարտակաւ հաստատել զայն ամենայն, զոր ետուն եղծանել Ցոյնք։

Իսկ մեծ Եպարքոսն զարմացեալ 'ի վերայ այսր, խընդրեաց զարձանագրութիւնս Կայսերական դիւանին, և եդիտ անդ զամենայն ինչ կարգադրեալ ըստ Շէրիի օրինաց և հրովարտակաւ Արքայի առաջի Բդեշխի, Դատաւորին և բաղմութեան այլազգեաց քաղաքին և Վերատեսուչ Նէպլի Էֆէնտեայ, և այլ ամենայն ինչ ընդարձակ և բացայայտ գրեալ էին անդ, սակայն բողոքագիր Պատրիարքին Հայոց, և տեղեկագիր Նէպլի Էֆէնտեայ, զոր մատոյց Եպարքոսին 'ի վերադարձին իւրում, զհակառակ նորին յայտ առնէին. զի տակաւին նոյն հրամանաւ արգելեալ կային ամենայն ինչ։ Ուստի հարկ եղեւ Եպարքոսին վերստին գրել առ Բդեշխն Երուսաղէմի Մէհէմմէտ Փաշա և տեղեկութիւն խնդրել 'ի նմանէ. «Ո՞յր աղագաւ է ասէ պատահմունք իրացդ, և ո՞րպիսի իրք սքանչելիք և զարմանալիք դիպեցան, որ հրովարտակաւ Արքայի և օրինօք Շէրիի առաջի բաղմութեան այլազգեաց կարգադրեալ խնդիրն՝ յանկարծ այսպէս մի միայն հրամանաւ Կուսակալին Սիդոնի դադարեալ խափանեցաւ, և Ցոյնք վերստին բռնացեալ 'ի վերայ իրաւանցն Հայոց՝ կախեցին զխափանեալ կանթեղս, և զայլ իրս որք ոչ էին յառաջ ժամանակաւ. զայսոսիկ ամենայն պարագայիւք քննեալ և ուսուցեալ 'ի հաւատարիմ արանց գրովք Դատաւորին եւ ձեր փութանակի ծանուսջիք մեզ». 'ի Հ Մուհարրէմ. ՌՀՄԲ։ (Բաուֆ)։

Ի ժամանակս Նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի Ցոյնք խցին զերկուց խողովակս Ջրոյն որ թէանէր 'ի տանեաց անտի 'ի Վանս Հայոց, ուր վասն այնր Մարկոս Եպիսկոպոս Քիլիցի չինեալ էր Ջրամբար։ Զաքարիա եւ Մատթէոս Պատրիարգունք ծանուցին 'ի Դուռն եւ խնդրեցին բանալ զխողովակսն ըստ առաջնոյն, և զի ոչ գտաւ յարձանագիրս Դիւանին վասն այնր, թէպէտեւ հարցեալ ըս-